Արձանագրություն N 4

N <<ՆՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/7>>
Ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 16 մայիսի 2019թ.

ժ.12:00

Մասնակցում էին՝

Հայտեր բացող անդամներ՝ Կ. Կարապետյան /տնտեսագետ /

Ի. Երզեկյան /կադրերի գծով տեսուչ/

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գրիգորյան /բուժական գծով փոխտնօրեն/

անդամներ՝ Ջ. Հաջյան /տնտեսական գծով փոխտնօրեն/

Ք. Խաչատրյան /դեղատան վարիչ/

Հանձնաժողովի քարտուղար՝ Հայկանուշ Թովմասյան

Օրակարգ

հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացրած մասնակիցների անվանումները և էլեկտրոնային փոստի հասցեները

<<ՆՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/7>> ծածկագրով գնման ընթացակարգին որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթեր ներկայացրել են՝

1.1 <<Բեսթ Գրուպ>> ՍՊԸ, էլ. փոստ՝ lideria@list.ru

2. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1 <<Բեսթ Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3.Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

3.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 46-րդ կետի դրույթներով

<<Բեսթ Գրուպ>> ՍՊԸ-ի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ներկայացրած (եզրակացություն) հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող՝ հիմք ընդունելով **<<ՆՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/7>>** ծածկագրով հրավերի I մասի 7.13 կետիում նշված փաստաթղթերի առկայությունը:

3.2 **<<ՆՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/7>>** ծածկագրով ընթացակարգի 1, 2, 3 չափաբաժինների համար առաջին տեղը զբաղեցնող է ճանաչվում <<Բեսթ Գրուպ>> ՍՊԸ-ն, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, որի հետ առաջարկվում է կնքել պայմանագիր:

3.3 **<<ՆՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/7>>** ծածկագրով ընթացակարգի 4 չափաբաժնի համար առաջարկած գնային առաջարկները գերազանցում էին դրա համար նախատեսված ֆինանսական միջոցները:

3.4 "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը /21.05.2019/:

3.5 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

4 <u>Շահերի բախման բացակայության մասին</u>

<<ՆՀԿ-ԳՀԱՊՁԲ-19/7>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նշված ծածկագրով գնման ընթացակարգի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստից հետո հայտարարում է, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունի շահերի բախում:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Գրիգորյան

Անդամներ՝ _____ Ջ. Հաջյան

_____ Ք. Խաչատրյան

_____ Կ. Կարապետյան

_____ Ի. Երզեկյան

Քարտուղար՝ _____ Հ. Թովմասյան